

[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)			[2] Մերիա		[3] Համար	
28	Դեկտեմբեր	2018 թ.				Բ		4032340651	
[4] Մատուցման ամսաթիվ						ՀՀ գրավոր հաշիվ վավերագրի			
27	Դեկտեմբեր	2018 թ.				Մերիա		Համար	
						ՀՀ գրավոր հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ			
Պայմանագիր			[5] Կերման ամսաթիվ			[6] Համար			
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)									
[7.1] ՀՂՄ կտրոնի համար									

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի												
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)					0	0	1	8	3	0	7	2
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[10] Անվանումը		«ԴԱԲԼ ԷՅՁ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՄԴԸ)										
[11] Բանկային տվյալները		Արդշինբանկ N 2471202323320000										
[12] Գտնվելու վայրը (հասցեն)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ ՄԱՍԻԿՈՆՑԱՆՑ Փ. 48										
[13] Լրացուցիչ տվյալներ												

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի												
[14] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)					0	2	6	3	1	2	6	3
[15] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը												
[16] Անվանումը		«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ										
[17] Բանկային տվյալները		N 900011000834										
[18] Գտնվելու վայրը (բնակության վայրը)		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՍԱՍ ՄԱՍԻԿՈՆՑԱՆՑ Փ. 46/5										
[19] Լրացուցիչ տվյալներ												
[20] Ում միջոցով		Անուն, ազգանուն		Համար								
		Լիազորագիր		Ամսաթիվ								

[21] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը						
№№ Ը/Գ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը)	Չափի միավորներ	Ընդհանուր ծավալը կամ մատակարար ըջանը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը
1	2	3	4	5	6	7
1	Թիվ 58210917 քրեական գործով դատահաշվապահական փորձաքննություն «Լիարժեք կյանք» ՀԳ- ում 2012-2017թթ	հատ	1	750000		750000
Ընդամենը						750000

Ծառայություն
մատուցող
(աշխատանք
կատարող)

STEPANYAN YAKHAGH 2112860522

28/12/2018 21:28:43



Ծառայություն
(աշխատանք)
ստացող

(ստորագրություն, անուն, ազգանուն)



Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Դատահաշվապահական փորձաքննություն նշանակելու մասին

10-ը հուլիսի, 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիրքեռհանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Ռ.Հ.Վարդանյանս, վերանայելով վարույթիս թիվ 58210917 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«Լիարժեք կյանք» բարեգործական հասարակական կազմակերպության նախագահ Սուրեն Մաղաքյանը, ուրիշի՝ առանձնապես խոշոր չափերի գումարներ յուրացնելու դիտավորությամբ, Մելանյա Պեպանյանին, Լեյլի Հովհաննիսյանին, Գայանե Անախասյանին, Ատոմ Կիրակոսյանին, Գենադի Մարգարյանին և Զեմֆիրա Սահակյանին հրամանագրել է ՀԿ-ի տարբեր հաստիքներում, վերջիններս որևէ աշխատանք չեն կատարել, սակայն վերջիններիս անուններով 2012-2017թթ. ընթացքում որպես աշխատավարձ կազմակերպության բյուջեից ելքագրվել է ընդհանուր 14.835.157 ՀՀ դրամ, ինչպես նաև Ատոմ Կիրակոսյանի անվամբ 02.08.2013-11.07.2016թթ. ընթացքում որպես գործուղման համար նախատեսված ծախսեր ելքագրվել է 573.000 ՀՀ դրամ, որի արդյունքում «Լիարժեք կյանք» ՀԿ-ին ֆինանսավորող «Փրկենք երեխաներին» միջազգային կազմակերպությանը պատճառվել է ընդհանուր 15.408.000 ՀՀ դրամի վնաս:

Նախապատրաստված նյութերի հիման վրա 2017 թվականի հուլիսի 14-ին ՀՀ ԿԱ ԱԱԾ քննչական վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 58210917 քրեական գործը, որի նախաքննության հետագա կատարումը հանձանարարվել է ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությանը:

Նախաքննությամբ պարզվել է, որ «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպությունը «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության ֆինանսավորմամբ 2012-2016թթ. իրականացրել է «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» դրամաշնորհային ծրագիր, որի բյուջեն կազմել է 103.857.196 ՀՀ դրամ, ինչպես նաև 2016 թվականի հունվարից սկսել է իրականացնել «Հաշմանդամություն ունեցող երեխաների համար համայնքահեն ծառայությունների մատուցում» անվանումով դրամաշնորհային ծրագիրը, որը նախատեսված է եղել ավարտել 2018 թվականի դեկտեմբերին, սակայն դրամաշնորհառու կազմակերպության կողմից 2017 թվականի հուլիսից ծրագրի ֆինանսավորումը դադարեցվել է: Ծրագրի ընդհանուր բյուջեն պայմանագրով սահմանվել է 150.000.000 ՀՀ դրամ, որից 2017թ. հուլիսի 1-ի դրությամբ ՀԿ-ին հատկացվել է 59.168.266 ՀՀ դրամ:

«Լիարժեք կյանք» ՀԿ-ի նախագահ Սուրեն Մաղաքյանը ցուցմունք է տվել, որ ՀԿ-ում որպես աշխատակիցներ ձևակերպված Մելանյա Պեպանյանի փոխարեն աշխատանքներ է կատարել Լուսինե Մկրտչյանը, Զեմֆիրա Սահակյանն աշխատել է տանը, ՀԿ-ի գրասենյակ չի այցելել, իր դստեր՝ Գոհար Գևորգյանի հետ միասին վարել են ՀԿ-ի հաշվապահությունը և դստեր հետ միասին են տնօրինել փոխանցված աշխատավարձը, Լեյլի Հովհաննիսյանին մի քանի անգամ տեսել է ՀԿ-ի գրասենյակում, տեղեկություններ

չի ունեցել, թե ինչ պատճառաբանությամբ չի հաճախել աշխատանքի, վերջինիս դատերը՝ Անի Ղուկասյանը հանդիսացել է ՀԿ-ի անունից իրականացված դրամաշնորհային ծրագրի ղեկավարը և մոր՝ Լեյլի Հովհաննիսյանի անվամբ փոխանցված աշխատավարձը տնօրինվել է վերջինիս կողմից, Գայանե Անախասյանը հանդիսացել է ՀԿ-ի իրավաբանը, վերջինս հաճախել է աշխատանքի, ստացել և ինքնուրույն տնօրինել է իր աշխատավարձը, Ատոմ Կիրակոսյանը կատարել է իր աշխատանքային պարտականությունները, բացի այդ իրականացրել է ՀԿ-ի կողմից շահագործվող ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման աշխատանքները, Գենադի Մարգարյանի փոխարեն որպես վարորդ աշխատել է Մհեր Զալինյանը, ծրագրի շրջանակներում շահագործվել է ոչ թե Գենադի Մարգարյանի ավտոմեքենան, այլ Հայկ Վարդանյանին պատկանող ավտոմեքենան :

Նույնաբովանդակ ցուցմունքներ են տվել նաև Մելանյա Պեպանյանը, Լուսինե Մկրտչյանը, Գոհար Գևորգյանը, Զեմֆիրա Սահակյանը, Գայանե Անախասյանը, Գենադի Մարգարյանը, Հայկ Վարդանյանը, Մհեր Զալինյանը:

Մինչ քրեական գործը ՀՀ ՔԿ ՀԿԳ քննության գլխավոր վարչության վարույթ փոխանցվելը Անի Ղուկասյանը մեկնել է ՀՀ-ից և մշտական բնակություն հաստատել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունում: ՀՀ ոստիկանության ՔՀԳ վարչություն կատարվել է համապատասխան հարցում:

Վարույթն իրականացնող մարմնի կողմից առգրավումներ են կատարվել «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչությունում և «Լիարժեք կյանք» ՀԿ-ի գրասենյակներում, որոնց ընթացքում առգրավվել են ՀԿ-ի կողմից իրականացված մի շարք դրամաշնորհային ծրագրերի հաշվապահական հաշվառման, ֆինանսատնտեսագիտական և ծրագրային փաստաթղթեր:

Վկա Կարինե Ղուկասյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ 2004 թվականի հուլիսի 4-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 12-ը Սուրեն Մաղաքյանի հետ գտնվել է փաստական ամուսնական հարաբերություններում, համատեղ բնակվել են, ինքն ամեն օր Սուրեն Մաղաքյանի հետ այցելել է «Լիարժեք կյանք» ՀԿ-ի գրասենյակ և տեղեկացված է եղել ՀԿ-ի գործունեությունից: Հայտնել է, որ Զեմֆիրա Սահակյան, Ատոմ Կիրակոսյան, Նունե Պեպանյան, Մելանյա Պեպանյան, Լեյլի Հովհաննիսյան, Գայանե Անախասյան, Էմիլյա Շաքարյան, Սերին Այվազյան, Սերինե Մաճկալյան, Նաիրա Դանիելյան, Մարինե Գրիգորյան, Սամվել Էլոյան, Անի Գաբրիելյան անձինք «Լիարժեք կյանք» ՀԿ-ի կողմից 2012-2016թթ. ընթացքում իրականացված դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում աշխատանքներ չեն իրականացրել:

Նկատի ունենալով, որ «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության տնտեսական գործունեության վերաբերյալ քննությանը հետաքրքրող մի շարք հարցեր պարզելու համար լանհրաժեշտ են դատահաշվապահական բնագավառի հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-246-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով նշանակել դատահաշվապահական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել «Դաբլ Էյջ Քոնսալթինգ» ՍՊ ընկերությանը:

2. Պարզաբանման համար փորձագետին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Որքան է կազմել «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում գբաղվածության խթանման միջոցով» և «Հաշմանդամություն ունեցող

երեխաների համար համայնքահեն ծառայությունների մատուցում» ծրագրերի իրականացման համար նախատեսված գումարը՝ ըստ ծրագրերի բյուջեների առանձին-առանձին:

բ/ Ինչ աշխատանքներ ու ծախսեր են նախատեսվել ծրագրերի բյուջեներով՝ առանձին-առանձին, որքան է կազմել յուրաքանչյուր աշխատանքի և ձեռք բերվող գույքի, նյութերի և այլն արժեքը՝ առանձին-առանձին, ճիշտ են հաշվարկվել արդյոք դրանց ծավալներն ու արժեքները: Ծրագրի ընթացքում գույք ձեռք բերելու գործընթացում պահպանվել են արդյոք օրենսդրության պահանջները, թե՛ ոչ, եթե՛ ոչ, կոնկրետ ինչ խախտումներ են թույլ տրվել:

գ/ Համապատասխանում են արդյոք ծրագրի իրականացման ընթացքում դրամաշնորհառու կազմակերպության կողմից ներկայացված միջանկյալ և վերջնական ֆինանսական հաշվետվություններով արտացոլված աշխատանքների ու կատարված ծախսերի ծավալները՝ ծրագրի բյուջեով նախատեսված աշխատանքներին ու ծախսերին, թե՛ ոչ:

դ/ Արդյոք դրամաշնորհառու «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչության ծրագրի իրականացման ընթացքում հավելյալ կամ պակաս գումարներ վճարվել է, թե՛ ոչ, եթե՛ այո, որքան է կազմել տարբերությունները, կոնկրետ ինչ աշխատանքների և կատարված ծախսերի համար, ինչով է դա պայմանավորված:

ե/ Ծրագրի բյուջեում նախատեսված աշխատանքների և նյութերի ձեռք բերման համար նախատեսված ծախսերը ճշգրիտ նշելու պայմաններում որքան կարող էր իրականում կազմել ծրագրի բյուջեն, որքան է կազմում տարբերությունն արդեն իսկ կատարված աշխատանքների և ծախսերի միջև, արդյոք դրա հետևանքով վնաս է պատճառվել է, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա ում:

զ/ Խախտումների հետևանքով «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչությանը, ՀՀ-ին վնաս պատճառվել է, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա՝ որքան է կազմում պատճառված վնասը:

է/ Որքան է կազմում «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով» և «Հաշմանդամություն ունեցող երեխաների համար համայնքահեն ծառայությունների մատուցում» ծրագրերի շրջանակներում աշխատանքներ իրականացրած յուրաքանչյուր աշխատակցի փաստացի ստացած վարձատրության չափը՝ ներառյալ գործուղումների և այլ ծախսերի համար նախատեսված գումարները (հաշվարկը ներկայացնել անվանական):

ը/ Նշված պայմանագրերով դրամաշնորհառու կազմակերպության կողմից պայմանագրային պարտավորությունները ողջ ծավալով կատարվել են, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա դրա արդյունքում «Սեյվ դը չիլդրեն ինթերնեյշնլ» հայաստանյան ներկայացուցչությանը, Հայաստանի Հանրապետությանը վնաս պատճառվել է, թե՛ ոչ, եթե՛ այո, ապա՝ որքան է կազմում պատճառված վնասը:

թ/ Որքան է կազմել միջանկյալ և վերջնական ֆինանսական հաշվետվություններով ցույց տրված, սակայն փաստացի չկատարված աշխատանքների և չվճարված գումարների տարբերությունը, ինչով է դա պայմանավորված:

ժ/ Ծրագրի իրականացման վերաբերյալ կատարված աուդիտի ընթացքում պահպանվել են արդյոք օրենսդրությամբ նախատեսված բոլոր պահանջները, ձեռնարկվել են արդյոք համապատասխան անհրաժեշտ ողջ գործողությունները՝ խախտումներ հայտնաբերելու նպատակով, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչպիսի խախտումներ են թույլ տրվել աուդիտն իրականացնող ընկերության կողմից:

ի/ Աուդիտ իրականացրած ընկերության կողմից կատարված ստուգումների արդյունքում ձեռք բերված հաշվապահական և այլ փաստաթղթերը որքանով են հիմք հանդիսացել ծախսերի հաշվարկներ կատարելու համար, արդյոք հաշվարկները կատարվել են ամբողջությամբ և ճշգրիտ, թե՛ ոչ:


լ/ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում «Լիարժեք կյանք» հասարակական կազմակերպության հետ պայմանագրային փոխհարաբերություններում գտնված մյուս սուբյեկտների կողմից կատարվել են արդյոք հարկային պարտավորությունները, թե՛ ոչ, եթե՛ ոչ, ապա ինչ խախտումներ են թույլ տրվել, դրա հետևանքով պետությանը վնաս պատճառվել է, թե՛ ոչ:

3. Փորձագետին իրավունք վերապահել նաև պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չեն առաջադրվել, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4. Փորձագետին տրամադրել սույն որոշումը՝ 4 թերթից, «Լիարժեք կյանք» ՀԿ-ի հաշվապահական հաշվառման փաստաթղթերը՝ ընդհանուր 10 փաթեթներում: Քրեական գործի նյութերն անհրաժեշտության դեպքում կտրամադրվեն փորձագետին:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ և 342-րդ հոդվածներով սահմանված քրեական պատասխանատվության մասին: Փորձագետին նախազգուշացնել նաև փորձաքննություն կատարելու համար նրան տրամադրված փաստաթղթերի պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակման դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Վարչության պետի տեղակալ՝



Ռ.Տ. Վարդանյան